ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Շուշանիկ Ներսիսյանի՝ 2018 թվականի նոյեմբերի 28-30-ը ք.Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Շուշանիկ Ներսիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

ք.Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2018 թվականի նոյեմբերի 28-30-ը

4. Հրավիրող կողմը՝

Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բարձրագույն վերահսկիչ մարմինների կողմից իրականացված անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրման և բաշխման արդյունքների, ինչպես նաև անդամ պետությունների բյուջեների եկամուտներին դրանց փոխանցման նկատմամբ համատեղ հսկողական միջոցառումների արդյունքների ամփոփման և հաշվետվությունների հաստատման նպատակով:

6. Քննարկված թեմաները՝

Հանդիպման ընթացքում քննարկվել է հաշվետվության նախագիծը, մասնավորապես՝

- համատեղ հսկողական միջոցառումների անցկացման հիմքերը, ինչպես նաև առարկան, օբյեկտը, ժամկետները, նպատակները և արդյունքները,
- անդամ պետությունների կողմից ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրման և բաշխման ընթացակարգերը,

- անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից ներմուծման մաքսատուրքերի հաշվետվությունների կարգերի սահմանումը և այլն:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպման ընթացքում ՀՀ ՊԵԿ պատվիրակությունը անդրադարձել է ԵԱՏՄ-ին ՀՀ-ի անդամակցությունից հետո ՀՀ մաքսային մարմինների կողմից գանձված մաքսատուրքի գումարների ՀՀ բյուջե կամ ԵԱՏՄ անդամ պետությունների միասնական հաշվին հաշվեգրելու և անդամ երկրների միջև բաշխելու գործընթացին, մասնավորապես նշելով, որ ՀՀ մաքսային մարմինների կողմից գանձված մաքսատուրքի ոչ բոլոր գումարներն են հաշվեգրվել միասնական հաշվին: Առանձնացված կերպով անդրադարձ է կատարվել՝

- ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների ներմուծման համար վճարված մաքսատուրքի գումարներին,
- ապրանքի հայտարարագրերի հիման վրա գանձված մաքսատուրքի գումարների հետ կապված հարցերին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման արդյունքում ստորագրվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բարձրագույն վերահսկիչ մարմինների կողմից իրականացված՝ անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրման և բաշխման արդյունքների, ինչպես նաև անդամ պետությունների բյուջեների եկամուտներին դրանց փոխանցման նկատմամբ համատեղ հսկողական միջոցառումների արդյունքների 2017 թվականի ամփոփ հաշվետվությունը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպման արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բարձրագույն վերահսկիչ մարմինների կողմից իրականացված անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրման և բաշխման արդյունքների, ինչպես նաև անդամ պետությունների բյուջեների եկամուտներին դրանց փոխանցման նկատմամբ համատեղ հսկողական միջոցառումների արդյունքների 2017 թվականի հաշվետվությամբ արձանագրված թերությունների շտկումանն ուղղված աշխատանքների իրականացման վերաբերյալ և ներկայացվել է այդ ուղղությամբ արդեն իսկ իրականացված քայլերի վերաբերյալ տեղեկատվություն:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Invalid signature

X

VERIFIED OCSP 12/3/2018 17:03:49 GMT+4

Signed by: NERSISYAN SHUSHANIK 5308860769

03.12.2018թ.